

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ԳԼԽԱՎՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՎԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂԱԾ ՔԱՅԼԵՐՆ ԵՆ

ՎՐԱՍԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՏԱՐԿԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



Կրթության եւ գիտության նախարարը կառավարության անդամներին, խորհրդարանի պատգամավորներին, կառավարական եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներին ներկայացրեց այն ծրագրերը, որոնք իրականացվել են կրթության մատչելիության ու որակի ապահովման, ինչպես նաեւ գիտության, մասնագիտական եւ բարձրագույն կրթության զարգացման համար:

Թամար Սանիկիձեի խոսքերով, «2016 թվականի պետական բյուջեի մասին» օրինամատյանի համաձայն, կրթության նախարարության բյուջեն 2012 թվականի համեմատությամբ, ավելացվել է 55,6 տոկոսով, իսկ ընդհանուր կրթության համար՝ 45,8 տոկոսով: Շուրջ 500 հազար աշակերտ ամեն տարի անվճար ստացել է դասագրքեր ու տետրեր:

Նոյեմբերի 13-ին Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն ներկայացրեց վերջին երեք տարիների իր գլխավորած գերատեսչության կատարած աշխատանքի արդյունքներն ու նախարարության 2016 թվականի բյուջեն:

րեր: Վրաստանի 1150 հանրային դպրոցների ավելի քան 60 հազար աշակերտներ ապահովվել են տրանսպորտով, ինչի արդյունքում, աշակերտների դպրոց հաճախելու ցուցանիշը գերազանցել է 95 տոկոսով:

2012 թվականի համեմատությամբ, գիտության զարգացման համար հատկացվող միջոցները ավելացվել են 82 տոկոսով, իսկ գիտահետազոտական հաստատություններում 164 տոկոսով:

2012 թվականի համեմատությամբ, բարձրագույն կրթության համար հատկացվող միջոցները ավելացվել են 41 տոկոսով: Նախարարի խոսքերով, սոցիալական ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվող ուսանողների թիվը կեռապատկվի: Ինչպես նշեց նախարարը, 2013 թվականից պետությունը լրիվությամբ ֆինանսավորում է մասնագիտական կրթությունը, իսկ վերջին երկու տարիների ընթացքում պետական ֆինանսավորումից օգտվել է շուրջ 27 հազար ուսանող: Մասնագիտական կրթության համար հատկացվող միջոցները 2012 թվականի համեմատությամբ, ավելացվել են 83 տոկոսով:

2013 թվականին սկսվեց ինկլյուզիվ մասնագիտական կրթության ներդրումը: Մոտ 300 սահմանափակ հնարավորություն ունեցող անձինք ստանում են մասնագիտական կրթություն: Վրաստանի մասշտաբով, 983 դպրոցներում հատուկ ուսուցիչներ դասավանդում են շուրջ 5000 սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց:

2013 թվականին ուսուցիչների բազային աշխատավարձը ավելացվել է 70 լարիով: Աշխատավարձի ավելացումը 2015-2016 թվականներին իրականացվում է երկու փուլով: Մասնավորապես, ընթացիկ տարվա սեպտեմբերին այն ավելացվել է 50 լարիով, իսկ 2016 թվականի ապրիլի 1-ից կավելացվի եւս 50 լարիով: Ինչպես նշվեց նախարարի ներկայացրած հաշվետվության մեջ, 2016 թվականի համար առանց հավելավճարների, ուսուցիչների աշխատավարձը կավելացվի 70 տոկոսով:

Վերջին երկու տարիների ընթացքում, կրթության նախարարությունը տարբեր տեսակի վերանորոգման աշխատանքներ է իրականացրել երկրի 1069 դպրոցներում: Վերջին երեք տարիների ընթացքում շուրջ 2 հազար հանրային դպրոց ստացել է դպրոցական նոր գույք:

Բարձրագույն հանրակրթական հաստատություններում ենթակառուցվածքի զարգացման համար վերջին երեք տարիների ընթացքում պետությունը ծախսել է 16,1 միլիոն լարի:

Ինչպես նշեց կրթության նախարարը, ողջ համակարգում գործընթացները կայուն են ընթանում: «Վերջին երեք տարիների ոլորտում շատ բան է արվել, եւ դրան հասնելու համար ընդունելու էինք կարեւոր որոշումներ, որպեսզի պետության համար կրթությունը դառնար առաջնահերթային: Դրա համար ավելացվեցին ծախսերն ու ռեսուրսները», - հայտարարեց Թամար Սանիկիձեն:

ՀՐԲԵԼՅԱՆ

## ՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՂ ԲՈՒՆ

ՍԱՄՑԽԵ-ՉԱՎԱԽԵԹԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 25 ՏԱՐԵԿԱՆ Է



Սամցխե-Չավախեթի պետական համալսարանը նշում է իր 25-ամյա հոբելյանը: Բուհի հիմնադրման տարելիցի առթիվ շնորհավորական ուղերձներ հղեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ռուսուֆաշվիլին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, Սամցխե-Չավախեթի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետ Ակակի Մաճուտաձեն:

Վրաստանի վարչապետի շնորհավորագրում մասնավորապես ասված է. «Նշանակալից է, որ համալսարանի գլխավոր կողմնորոշիչը բարձրորակ կադրերի պատրաստումն է, այդ թվում՝ ոչ վրաց երիտասարդներին վրաց հասարակայնությանը ինտեգրման աջակցությունը: Այդ առումով, համալսարանը լրիվությամբ համապատասխանում է այն կուրսին, որը մեր կառավարության համար առաջնահերթային է»:

Իր ողջույնի խոսքում Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, անդրադառնալով համալսարանի անցած ուղուն, նշեց. «Սամցխե-

Վրաստանի բազմակողմանի առաջընթացով տարածաշրջաններից մեկն է, եւ այդ գործում մեծ է համալսարանի ծառայությունը: Սամցխե-Չավախեթի համալսարանը գործում է երկու քաղաքներում՝ Ախալցխեում եւ Ախալքալաքի-

թյան, էկոնոմիկայի, իրավունքի, օտար լեզվի, կիրառական մաթեմատիկական եւ տեղեկատվական տեխնոլոգիայի ֆակուլտետները: Չավախեթում գործող բուհի գլխավոր նպատակը եղել է մնում է տեղի եւ ոչ միայն տեղի բնակչությանը բարձրագույն կրթություն տալը պետական լեզվով, նպաստել վրաց հասարակայնությանը ոչ վրաց բնակչության ինտեգրմանը, ոչ վրացիների շրջանում վրաց լեզվի, գրականության, պատմության ու մշակույթի ժողովրդականացմանը, բարձրորակ մասնագետներ

րոնի պետ Նարգիս Կարապետյանը: Այն մասին, որ համալսարանը, բուհի մասնաճյուղերը հաջողությամբ իրականացնում են վերոնշյալ առաքելությունները, նշում են նաեւ համալսարանի ուսանողները: Մասնավորապես, բուհի կրթության, հումանիտար եւ սոցիալական գիտությունների ֆակուլտետի վրաց բանասիրության երրորդ կուրսի ուսանողուհի **Նազկլ էքնոյանը** նշում է, որ չորս տարի առաջ Սամցխե-Չավախեթի պետական համալսարանի վրաց լեզվի նախապատրաստական կրթական ծրագրով բուհ է ընդունվել՝ համընդհանուր միայն մայրենի լեզվի քննություն: «Ստացա պետական ֆինանսավորում, ինչը ինձ համար նշանակալից էր, մեծ ինտենսիվությամբ ու հաճույքով սկսեցի սովորել վրացերեն: Դեռես նախապատրաստական դասընթացներին արդեն որոշել էի, որ ուսումս շարունակելու եմ վրաց բանասիրության բակավարիատի ծրագրով: Այսօր վստահությամբ կարող եմ ասել, որ վրաց լեզվի նախապատրաստական կրթական ծրագիրը հաջողակ է եւ նշանակալից հնարավորություն ոչ վրացական դպրոցների շրջանավարտների համար Վրաստանում բարձրագույն կրթություն ստանալու գործում», - գրում է **Նազկլ էքնոյանը**:



ում: Այս տարի Ախալքալաքիում իրականացվեց ուսանողական հանրակացարանի վերանորոգումը, ինչը զգալիորեն բարելավեց ուսանողների կենցաղային պայմանները առավել գրավիչ դարձնելով այն տարբեր ազգության երիտասարդների համար», - նշեց Թամար Սանիկիձեն:

Ինչպես արդեն նշվեց, Սամցխե-Չավախեթի պետական համալսարանը գործում է Ախալցխեում եւ Ախալքալաքիում: Ախալքալաքիում բուհի մասնաճյուղի բացման նախաձեռնողը համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր **Մերաբ Բերիձեն** էր: Այն բացվեց 2002 թվականին, տեղի թիվ 174 պրոֆտեխնուստումարանի շենքում: Մասնաճյուղում գործում են վեց բանասիրության, մանկավարժու-

րի պատրաստմանը: Հարկ է նշել, որ Ախալքալաքիում գործող մասնաճյուղը հաջողությամբ է իրականացնում վերոնշյալ առաքելությունը: Օրինակ, 2006-2007 թվականներին վրացերենով բարձրագույն կրթություն ստացած շուրջ 219 հայագի շրջանավարտներից 143-ը անմիջականորեն աշխատանքի տեղավորվեց պետական հաստատություններում եւ մասնավոր հատվածում:

Բուհի հոբելյանի առթիվ շնորհավորական ուղերձներ հղեցին նաեւ Ախալցխեի մունցիպալիտետի վարչության նախագահ **Ջագա Մելիքիձեն**, Ախալքալաքիի մունցիպալիտետի վարչության նախագահ **Էդուարդ Աղասարյանը**, Ախալցխեի քաղաքապետ **Գիորգի Կոպաձեն**, Ախալքալաքիի հանրակրթական ռեսուրս-կենտրոնի պետ **Նարգիս Կարապետյանը**:



Չավախեթի համալսարանն ի սկզբանե մեծ գործառույթ ստանձնեց եւ այս 25 տարիների ընթացքում հաջողությամբ կատարում է ստանձնած պարտավորությունները: Առաջին հերթին, նա իր առաքելությունն է կատարում քաղաքացիական ինտեգրման ոլորտում, երիտասարդության կրթության, արժանավոր քաղաքացիների դաստիարակության գործում, նպաստում է երկրի գիտական առաջընթացին: Սամցխե-Չավախեթի

ԿՐԹԱԿԱՆ

## ՎՐԱՍԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՍԱՄՑԽԵ-ՉԱՎԱԽԵԹՈՒՄ

Նոյեմբերի 20-ին Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, Սամցխե-Չավախեթի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետ Ակակի Մաճուտաձեի հետ միասին, պետական ծրագրի շրջանակներում անհատական համարային դպրոցների առաջադեմ, հանրակրթական բազիսային աստիճանը հաջողությամբ հաղթահարած 84 տասներորդ դասարանցիների:



Նշենք, որ առաջադեմ աշակերտների խրախուսման վերոնշյալ ծրագիրը կշարունակվի, եւ շնորհալի ու աշխատասեր աշակերտներն առաջիկայում էլ կգնահատվեն:

Նույն օրը Թամար Սանիկիձեն, փոխնախարար Լիա Գիգաուրիին, ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի եւ հանրակրթական ենթակառուցվածքի զարգացման գործակալության ներկայացուցիչները հանդիպում ունեցան հանրային դպրոցների մանկավարժների եւ տնօրենների հետ:

Հանդիպումն անցկացվեց երկխոսության կարգով:

Հանդիպմանը՝ կրթության նախարարության ղեկավարները խոսեցին ոլորտում վերջին ժամանակներում ներդրած նորամուծությունների մասին: Հանդիպմանը առանձնակի նշանակություն հատկացվեց ուսուցիչների մասնագիտական զարգացման նոր սխեմայի թեմային: Բնականաբար, լսարանը մասնամասն տեղեկատվություն ստացավ մանկավարժների աշխատավարձի ծրագրված ավելացման վերաբերյալ:

Նախարարն անդրադարձավ նաեւ հանրակրթական ենթակառուցվածքի կատարելագործման եւ հետաքրքրություն ներկայացնող մյուս հարցերին:



ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՐԱՅ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՆ ԷՆ



Հանդիպմանը Սերժ Սարգսյանը մեծապես կարևորեց հանձնաժողովի գործունեությունը, որը նրա համոզմամբ, երկկողմ առևտրատնտեսական համագործակցու-

Նոյեմբերի 18-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով փոխտեղակալ Բրիջիթ Բրինքի հետ, ով Հայաստան է ժամանել Տնտեսական հարցերով հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստին մասնակցելու նպատակով:

թյան համակարգման կարևոր եւ հաջողված ձեւաչափ է: Զրուցակիցները համակարծիք էին, որ ներկայումս երկկողմ հարաբերությունների օրակարգը ներառում է ամենատարբեր ոլորտներ՝ քաղաքական, տնտեսական, անվտանգության, հումանիտար եւ այլն, որոնց շրջանակներում տարեցտա-

րի նոր ձեռքբերումներ են արձանագրվում: Հայաստանը եւ Միացյալ Նահանգները ամուր գործընկերային հարաբերություններ ունեն թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ համագործակցության ձեւաչափերում: Հայաստանի նախագահը կարևորեց նաեւ Միացյալ Նահանգների՝ որպես ԵԱՀԿ Մինսկ խմբի համանախագահող երկրի, շարունակական ջանքերը ԼՂ հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ:

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՈՒ ՋՅՈՒԴԵՐԻ ՄԵՐՁԵՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Նոյեմբերի 18-ին կայացավ Համազգային հայ կրթական եւ մշակութային միության եւ ԵՊՀ-ի կողմից կազմակերպած «Արդի հայերենի հիմնախնդիրները» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությունը:

Բացման խոսքով հանդես եկավ ԵՊՀ հայկական բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանը: Ներկաներին ողջունեցին Հայաստանի ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը եւ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը:

Ողջունի խոսքով հանդես եկավ նաեւ Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հա-

կոբյանը: Նա կարևորեց Համազգային հայ կրթական եւ մշակութային միության նախաձեռնությամբ Մայր բուհում «Արդի հայերենի հիմնախնդիրները» գիտաժողովի կազմակերպումը: Հրանուշ Հակոբյանն առանձնացրեց երկու հիմնահարց, որոնց ուղղությամբ պետք է աշխատանքներ տարվեն: «Առա-

ջինն արելու հայերենի կանոնակարգման խնդիրն է, որը հնարավոր է արդյունավետ իրականացնել Հայերենի բարձրագույն խորհրդի ստեղծմամբ: Երկրորդ կարևոր խնդիրը հայերենի երկու ճյուղերի մերձեցման խնդիրն է»,- նշեց



նա: Գիտական զեկուցումներով հանդես են եկել մի շարք անվանի լեզվաբաններ Հայաստանից եւ սփյուռքից:

ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳԻՐԸ



Նոյեմբերի 20-ին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄՁԳ) եւ Սմիթսոնյան ինստիտուտը ազդարարեցին «Իմ Հայաստանը» ծրագրի մեկնարկը:

րի անձնակազմը կաշխատի հայաստանյան գործընկերների հետ՝ մշակութային ժառանգությունը պահպանելու նպատակով նոր ռազմավարություններ մշակելու համար: Ծրագիրը կնստաստի երկրի գյուղական համայնքների զարգացմանը եւ կբարձրացնի Հայաստանի մասին իրագեկվածությունը միջազգային շուկաներում:


զբոսաշրջության զարգացմամբ, քանի որ հասկանում են, որ այն լուրջ ներուժ է այս կամ այն երկրի հետ կապերը զարգացնելու ուղղությամբ»,- ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության եւ Սմիթսոնյան ինստիտուտի համագործակցությամբ ազդարարված «Իմ Հայաստանը» ծրագրի մեկնարկին հայտարարեց Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ հավելեց. «Ես չեմ հիշում վերջին տարիներին իրականացված մեկ այլ ծրագիր, որտեղ այսպիսի լուրջ մտեցում լինի պետության եւ մասնավորի միջեւ համագործակցության առումով»:

«Օտարերկրյա պետությունները հաճախ են հետաքրքրվում մշակութային

ՄՅԽԵԹԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ԷԶՄԻԱՍՏՆՈՒՄ

Մցխեթայի քաղաքապետարանի եւ սակրեբուլոյի պատվիրակությունը աշխատանքային այցով գտնվում էր Էջմիածնում:

Նոյեմբերի 20-ին այստեղ ստորագրվեց երկու քաղաքների՝ Էջմիածնի եւ Մցխեթայի միջեւ համագործակցության հուշագիր: Էջմիածնի նախագահ Էջմիածնի թուրքապետներ են դառնալու: Ստորագրման արարողությունից հետո, Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի եւ փոխքաղաքապետների ուղեկցությամբ, վրացի հյուրերն այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, մեկ րոպե լուռությամբ հարգեցին անմեղ նահատակների հիշատակը: Մցխեթայի քաղաքապետ Ավթանիկ Նեմսիցվերիձեն, սակրեբուլոյի նախագահ Իլիա Ջիչկարիանին, քաղաքապետարանի մշակույթի եւ սպորտի գծով մասնագետ Թեմգիզ Խուցիշվիլին այցելեցին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ: Ավթանիկ Նեմսիցվերիձեն գրառում կատարեց պատվավոր հյուրերի հուշամատյանում:



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՎԱԶԵԼ ԵՆ ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԸ



Ընդ որում, Հայաստանը ԱՊՀ միակ երկիրն է, որտեղ 2015թ. հոկտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, գրանցվել է սպառողական ապրանքների գնանկում, որը կազմել է 2,4 տոկոս, իսկ պարենային ապրանքների պարագա-

Այս տարվա հոկտեմբերին, 2014թ. դեկտեմբերի համեմատ, Անկախ պետությունների համագործակցության երկրներում, ընդհանուր առմամբ, սպառողական ապրանքների գներն աճել են 14,9 տոկոսով, այդ թվում՝ պարենային ապրանքների՝ 13,8 տոկոսով: 2014թ. հոկտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, այդ ցուցանիշները կազմել են, համապատասխանաբար, 9,1 տոկոս եւ 10,6 տոկոս:

յում՝ 7,5 տոկոս: Պարենային ապրանքների գների նվազում է արձանագրվել նաեւ Ղրղզստանում՝ 3,3 տոկոսով: 2015թ. հոկտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, սպառողական ապրանքների առավելագույն գնաճ արձանագրվել է Ուկրաինայում՝ 39,5 տոկոսով, պարենային ապ-

րանքների գներն աճել են 35,7 տոկոսով: Ռուսաստանում այդ ցուցանիշները կազմել են, համապատասխանաբար, 11,2 տոկոս եւ 11,4 տոկոս, Ադրբեջանում՝ 2,7 տոկոս եւ 3,6 տոկոս: Ինչպես տեղեկացրեց ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեն, եթե այս տարվա հոկտեմբերին, սեպտեմբերի համեմատ, Հայաստանում պարենային ապրանքների գները նվազել են 1,4 տոկոսով, ապա ԱՊՀ երկրներում միջին գնաճը կազմել է 1,2 տոկոս, առավելագույն գնաճ արձանագրվել է Ղազախստանում՝ 4,6 տոկոս, որին հետևում են Մոլդովան՝ 3,4 տոկոս, Բելառուսը՝ 1,5 տոկոս, Ուկրաինան՝ 1,1 տոկոս: Ռուսաստանում եւ Ադրբեջանում ամսական գնաճը կազմել է, համապատասխանաբար, 1,0 եւ 0,3 տոկոս:

ՀԱՆՐԱՊԵՎԵՐՆ ԿՄԱՍՆԱԿՅՐ 2,553035 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԳ

Հայաստանի սահմանադրության փոփոխությունների՝ դեկտեմբերի 6-ին ծրագրված քվեարկության օրվանից 20 օր առաջ Հայաստանի ընտրողների ռեգիստրում ընդգրկված հանրաքվեի մասնակիցների ընդհանուր թիվը 2 միլիոն 553 հազար 085 մարդ է: Ի կարգումն ՀՀ ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 8-րդ մասի ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ժամանակ քվեարկության օրվանից առաջ՝ 30-րդ, 20-րդ, 10-րդ եւ քվեարկության նախորդ օրը, Հայաստանի սահմանադրությունը հրապարակում է Հայաստանի ընտրողների ռեգիստրում ընդգրկված քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անչանց ընդհանուր թիվը՝ նշելով նաեւ յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված մասնակիցների թիվը: ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն կկայանա դեկտեմբերի 6-ին:

ՊԵՏՔՅՈՒՂԵՐ ԵՎ ՍՊՈՐՏԻՆ ԶԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՃՆԱԿՆԱԿ

Արցախի Հանրապետության կառավարության նոյեմբերի 18-ի նիստում, որն անցկացվել է վարչապետ Արայիկ Հարությունյանի նախագահությամբ, հավանության է արժանացել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը: Արցախի Հանրապետության 2016 թվականի համախմբված բյուջեն եկամուտների գծով կկազմի ավելի քան 86 մլրդ 185 մլն դրամ (առանց միջբյուջեային փոխանցումներից ստացվող մուտքերի), ներառյալ՝ Հայաստանից ստացվող միջպետական վարկի գումարը: Բյուջեային ծախսերը գալիք տարում կլինեն մոտ 88 մլրդ 946 մլն դրամ (առանց միջբյուջեային փոխանցումների), իսկ պակասուրդը կկազմի 2 մլրդ 761,3 մլն դրամ:

«ՊԱՍԱՐԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել «Դասարան» կրթական նախագծի հիմնադիրների եւ նրանց զխավորությամբ նախագիծն իրականացնող թիվի անդամների հետ, ովքեր Հայաստանի նախագահին ներկայացրին Հայաստանի կրթական համակարգում իրագործվող «Դասարան» նախագիծը, որը միավորում է 1495 դպրոց՝ Հայաստանից եւ Արցախից: Հանդիպմանը մասնակցող Հայաստանի կրթության եւ գիտության, սփյուռքի նախարարները, պաշտպանության փոխնախարարը, երեւանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետը, կրթության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների մասնագետներ եւ պարասխանապետ այլ պաշտոնյաներ ներկայացրել են իրենց տեսակետները «Մասնավոր-պետություն համագործակցության արդյունք» այդ ծրագրի արդյունավետության վերաբերյալ: Սերժ Սարգսյանը, հանդիպման մասնակիցների եւ «Դասարան» կրթական ծրագրի պատասխանատուների հետ, ջննարկել է ծրագրի զարգացման հեռանկարին եւ հնարավոր աջակցությանը վերաբերող հարցեր, այդ նպատակով ավելի համապատասխան հանչնարարականներ:

ԲԵՍՎԻԶ-ԲԱՏԱՆՈՐՎԵՐԻ 78,8 ՏՈՒՆՈՒԸ ՕՉՏՎԵԼ Է ՍՈՒԵՍԻՎԱՊՈՐՏԻՆԻՑ

Սուբսիդավորման կարգի փոփոխությունից հետո, բնակիչ-բաժանորդների շուրջ 78,8 տոկոսը հոկտեմբերին ծախսած էլեկտրաէներգիայի համար օգտվել է տրամադրվող փոխհատուցումից: Ինչպես արդեն հաղորդել ենք Հայաստանի կառավարությունը հոկտեմբերի 29-ին որոշում ընդունեց բնակչության մասով սուբսիդավորումը դարձնել հասցեական եւ այն տրամադրել առավել քիչ սպառում ունեցող խմբերին: Խոսքն ամսվա ընթացքում մինչեւ 250 կվտ էլեկտրաէներգիա օգտագործող բնակիչ-բաժանորդների մասին է: Այդպիսի սպառողների թիվը հոկտեմբերին կազմել է ավելի քան 601 հազար: Նշենք, որ էլեկտրաէներգիայի սուբսիդավորման կարգի փոփոխությունից հետո, փոխհատուցման տրամադրումը հավասար չափով ստանցնել են կառավարությունն ու «Տաշիր» բարեգործական հիմնադրամը: Ընդ որում, այդ պարավորությունը գործում է սուբսիդավորման ամբողջ ժամանակահատվածի համար, այսինքն՝ սկսած օգոստոսի 1-ից մինչեւ 2016թ. հուլիսի 31-ը: